ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 273-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԲԻԿ ՍԱՐՈՒԽԱՆԻ ԻԽՏԻԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ճանաչել Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրում գտնվող, քաղ. Ռուբիկ Սարուխանի Իխտիարյանի սեփականության իրավունքը 0.23103 հա հողամասի և իր իսկ կողմից կառուցված 12.2 քմ մակերեսով բնակելի տան սեփականության իրավունքը և հասցեավորել Վայք համայնք, Մարտիրոս բնակավայր, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 10/1 հողամաս և համարել օրինական (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023KQXAJA):

2. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 12.2 քմ մակերեսով կառույցը, սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Ռուբիկ Իխտիարյանին շինության համար վճարել 7 700/ 12.2 x 631/ ՀՀ դրամ:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 274-Ա

ՌՈՒԲԻԿ ԻԽՏԻԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբիկ Իխտիարյանի դիմումը և «Ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որը նրանց պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցուցակում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության , ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքը և չի առաջացնում սերվիտուտ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ճանաչել Ռուբիկ Սարուխանի Իխտուարյանի /ծնված 1955թ./ սեփականության իրավունքը ըստ քարտեզագրման արդյունքների 0.06103 հա ընդհանուր մակերեսով ավել օգտագործվող հողամասի նկատմամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 275-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00296 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,00296 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0024-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է Նարեկ Ավագի Բաբաջանյանի կողմից ինքնակամ կառուցված 25.35 քմ մակերեսով շինություն, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 51/1 ավտոտնակ և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023WTLNTR):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 276-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԿԱՐԱԼՈՒԻ ՋՈՒՐ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԻՀԻ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԵՐԻՑ ՃՅՈՒՂԵՐ ՀԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել Վայք համայնքի Արին բնակավայրի «Կարալուի ջուր» կոչվող տարածքում գտնվող «Գիհի» տեսակի ծառերից յուրաքանչյուրից կտրել 1-2 ճյուղ՝ (ընդհանուր 25-35 հատ ճյուղ՝ կատարելով սանիտարական էտ), Վայք համայնքի Արին բնակավայրի Ամանորյա տոնածառի համար:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 277-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎԵԼՈՒ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ներքին գործավարության կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություններին առնչվող պաշտոնների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզի
Վայք համայնքի ղեկավարի
« 25» դեկտեմբերի 2023թ. թիվ 277-Լ որոշման

ԿԱՐԳ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ Վայոց ձորի Վայքի համայնքապետարանի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների (այսուհետ՝ «Ծառայողական օգտագործման համար») նշումով ներքին գործավարության կազմակերպումն ու իրականացումը:

2. «Ծառայողական օգտագործման համար» (այսուհետ՝ «ԾՕՀ») նշումով տեղեկությունների ներքին գործավարությունը կազմակերպում է աշխատակազմի քարտուղարը՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբրի համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

3. Համակարգում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat) կամ «ՂԷԱ Մարիամ» (GHEA Mariam) տառատեսակներով:

4. Համակարգում փաստաթղթերի վավերացումն իրականացվում է էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման միջոցով՝ բացառությամբ այն մարմինների, որտեղ ներդրված չէ համակարգը կամ ժամանակավորապես չի գործում:

5. Էլեկտրոնային ստորագրության վավերության դեպքում փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը համարժեք է թղթային տարբերակին: Օգտվողի անունով Համակարգում կատարված ցանկացած մակագրություն (նշագրում, գրառում) համարժեք է փաստաթղթի վրա կատարած մակագրությանը (նշագրմանը, գրառմանը):

II. ԾՕՀ ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ

6. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների շրջանակը սահմանափակ է՝ տեղեկությունների արտահոսքն ու հրապարակումը բացառելու նպատակով:

7. Աշխատակազմում «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների շրջանակը որոշում է աշխատակազմի քարտուղարը՝ կախված աշխատանքների ծավալից:

8. Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար իր ստորաբաժանումից առաջադրում է «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների տվյալներ, որը հաստատում է համայնքի ղեկավարը:

9. Վայքի համայնքապետարանի աշխատակազմից «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնները որոշում է համայնքի ղեկավարը:

10. Յուրաքանչյուր ստորաբաժանման «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառության կազմակերպման, վարման և սահմանված ժամկետներում կատարման համար պատասխանատու է տվյալ ստորաբաժանման ղեկավարը:

11. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնատար անձանց փոփոխության դեպքում ստորաբաժանումների ղեկավարները եռօրյա ժամկետում տեղեկացնում են աշխատակազմի քարտուղարին:

12. «ԾՕՀ» նշումով գրությունների՝ սահմանված ժամկետում կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը, որը պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն:

III. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՄՏԻՑ ԵՎ ԵԼԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

13. Վայքի համայնքապետարանում «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Վայք համայնքի ավագանու 09.03.2022 թվականի «Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 21-Ա որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:

14. Համակարգի «Վերնագիր» բաժնում, ինչպես նաև «ԾՕՀ» նշումով մտից և ելից փաստաթղթերի վերին աջ անկյունում կատարվում է «ԾՕՀ» գրառումը:

IV. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ «ԾՕՀ» ՆՇՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄԸ

15. «ԾՕՀ» նշման անհրաժեշտությունը որոշում է այդ փաստաթուղթը կատարողը և ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

16. Արգելվում է «ԾՕՀ» տեղեկության շարքին դասել՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց իրավական կարգավիճակը, ինչպես նաև անձանց իրավունքները և ազատությունները, դրանց իրականացման կարգերը սահմանող իրավական ակտերը,

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի քննարկման և դրանց արդյունքներով որոշումների կայացման կարգերը,

3) սահմանված կարգով քննարկված իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի վերաբերյալ կայացված որոշումները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

4) անձանց իրավունքների, ազատությունների, պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք պահվում են գրադարանների բաց ֆոնդերում կամ կազմակերպությունների բաց տեղեկատվական համակարգերում,

5) բյուջեի կատարման, տնտեսության և բնակչության կարիքների վիճակի մասին տեղեկությունները,

6) մարդկանց անվտանգությանը և առողջությանն սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները,

7) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, մշակույթի, առևտրի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները,

8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները,

9) պետության կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, պաշտոնատար անձանց, կազմակերպություններին տրամադրվող արտոնությունների և սոցիալական երաշխիքների մասին տեղեկությունները:

V. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Համակարգում ներառված «ԾՕՀ» նշումով ցանկացած փաստաթղթի հասանելիության նկատմամբ սահմանափակումներ կարող են կիրառվել մինչև հինգ տարի ժամկետով:

18. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվելու իրավունք ունեցողները ցանկացած ժամանակ Համակարգից կարող են մտից կամ ելից համարներով գտնել միայն իրենց վերաբերելի փաստաթղթերը:

19. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ «ԾՕՀ» նշումով, սակայն իրեն չվերաբերող փաստաթղթերին Համակարգից օգտվողը կարող է ծանոթանալ միայն մարզպետի կամ գլխավոր քարտուղարի համաձայնությամբ՝ իր կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա:

20.Հինգ տարին լրանալուց հետո «ԾՕՀ» նշումով տեղեկության հասանելիության նկատմամբ սահմանափակումները հանվում են:

21. Համակարգում պահպանված՝ արխիվացված բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում ստեղծված և վերջինիս կողմից վարվող կենտրոնական արխիվ:

22. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում ստեղծված կենտրոնական արխիվում փաստաթղթերը պահպանվում են 10 տարի ժամկետով:

VI. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

23. «ԾՕՀ» նշումով տեղեկությունը չի կարող հրապարակվել (տարածվել) առանց այդ տեղեկությունը պարունակող փաստաթուղթն ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի թույլտվության:

24. «ԾՕՀ» նշումով տեղեկության հրապարակումը տեղեկությունների հրապարակումն է այն անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահվել են ըստ ծառայության, աշխատանքի կամ հայտնի են դարձել այլ ճանապարհով, ինչի հետևանքով դրանք հայտնի են դարձել այլ անձանց:

25. «ԾՕՀ» նշումով տեղեկություններ պարունակող փաստաթղթերի կորուստը փաստաթղթերի վերահսկման կորուստն է (այդ թվում՝ ժամանակավորապես) պատասխանատու անձի տիրապետությունից, որին դրանք վստահվել էին ըստ ծառայության կամ աշխատանքի, և հետևանք է դրանց հետ վարվեցողության ընթացքում սահմանված կարգի խախտման, որի պատճառով այդ փաստաթղթերին դարձել են կամ կարող են իրազեկ դառնալ կողմնակի անձինք:

26. «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման կամ հոսակորուստի դեպքում դրանք հայտնաբերող պաշտոնատար անձը դրա մասին զեկուցում է Գլխավոր քարտուղարին և մարզպետին:

27.«ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման հանգամանքները պարզելու նպատակով համայնքի ղեկավարի որոշմամբ կարող է նշանակվել ծառայողական քննություն:

28. «ԾՕՀ» նշումով տեղեկություն հրապարակած անձանց նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 2
ՀՀ Վայոց ձորի մարզի
Վայք համայնքի ղեկավարի
« 25»դեկտեմբերի 2023թ. թիվ 277 –Լ որոշման

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

1.Համայնքի ղեկավարի տեղակալ (աշխարազոր)
2. Աշխատակազմի քարտուղար (Ծածկագիր՝ 1.2-1)
3.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (Ծածկագիր՝ 3.2-6)

Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժին

4. Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ (Ծածկագիր՝ 2.1-2)
5.Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետ (Ծածկագիր՝2.3-3)

Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին

6. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ (Ծածկագիր՝ 2.1-1)
7.Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ (Ծածկագիր՝ 2.3-1)

Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին

8.Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ (Ծածկագիր՝ 2.1-4)

Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին

9. Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ (Ծածկագիր՝ 2.1-3)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 278-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 -Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 22/21 ավտոտնակ հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը 37.0 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,00197 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Նարեկ Խաչատուրի Խաչատրյանին՝ շինության համար՝ 52 614 /37 x 1422/ (հիսուներկու հազար վեց հարյուր տասնչորս) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 36 991 /19.7x1877.7/երեսունվեց հազար ինը հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 279-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 -Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ա.Մելիքյան փողոց, 1-ին նրբանցք, 17/3 ավտոտնակ հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը 21.6 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,00249 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Գեղամ Սլավիկի Հայրապետյանին՝ շինության համար՝ 30 715 /21.6 x 1422/ (երեսուն հազար յոթ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 46 755 /24.9x1877.7/քառասունվեց հազար յոթ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
էլ. Փոստ vayktown@mail.ru

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 280-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՆՈՒՆԿԱ ՄԵԾԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունքը հաստատած փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117 օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը (մտից N- Հ-64).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի վարչական տարածքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0002-0090 կադաստրային ծածկագրով շենքը հասցեավորել Վայք համայնք, Վայք քաղաք, Շինարարների փողոց, 3-րդ նրբանցք, 1 բնակելի տուն:
2. Ճանաչել Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ Նունկա Մեծիկի Հովհաննիսյանի /ծնվ. 04.03.1966թ/ Վայք համայնք, Վայք քաղաք, Շինարարների փողոց, 3-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող 0.08000 հա մակերեսով հողամասի և շինության սեփականության իրավունքը:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
4. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**